

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ԿԱԴԱՍՏՐԻ ԿՈՄԻՏԵԻ

«ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ»-Ի ԱՎԱԳ ԽՈՐՀՐԴԱՏՈՒ

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Պաշտոնի անվանումը, ծածկագիրը

Կադաստրի կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) «Վայոց ձորի խորհրդատվական կենտրոն»-ի (այսուհետ՝ Կենտրոն) ավագ խորհրդատու (այսուհետ՝ Ավագ խորհրդատու) (ծածկագիրը՝ 61-26.12ը-Մ3-4)

1.2. Ենթակա և հաշվետու է

Ավագ խորհրդատուն անմիջական ենթակա և հաշվետու է Կենտրոնի պետին:

1.3. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Ավագ խորհրդատուի բացակայության դեպքում նրան փոխարինում է Կենտրոնի Ավագ խորհրդատուներից մեկը կամ Ավագ մասնագետներից մեկը:

1.4. Աշխատավայրը

Հայաստան, մարզ Վայոց ձոր, համայնք Եղեգնաձոր, ք. Եղեգնաձոր Շահումյան փողոց 5:

2. Պաշտոնի բնութագիր

2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները

1. մասնակցում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում և կարգով ստորագրությունների իսկության ճանաչմամբ պայմանագրերի կնքման աշխատանքներին:

2. մասնակցում է անշարժ գույքի պետական ռեգիստրի գործառնությունների, դրանց իրականացման համար դիմումի ու անհրաժեշտ փաստաթղթերի ներկայացման կարգի, պետական տուրքի ու ծառայությունների վճարման վերաբերյալ խորհրդատվության տրամադրմանը:

3. մասնակցում է անշարժ գույքի պետական գրանցման և գրանցված իրավունքների վերաբերյալ տեղեկատվության տրամադրման և անհրաժեշտ փաստաթղթերի ամբողջականության վերաբերյալ խորհրդատվության տրամադրման աշխատանքներին:

4. իրականացնում է քաղաքացիների կողմից ինքնասպասարկման ընթացքում նրանց անհրաժեշտ օժանդակության տրամադրումը:

5. մասնակցում է դիմումատուներին անշարժ գույքի պետական ռեգիստրի գործառնությունների իրականացման նպատակով տրվող դիմումների ընդունման և այդ գործառնությունների արդյունքում կազմված փաստաթղթերի տրամադրման աշխատանքներին:

6. մասնակցում է տեսաներածման կամ տվյալների մուտքագրման միջոցով ավտոմատ ներբեռնման ու գեներացման՝ դիմումներին կից ներկայացվող փաստաթղթերի «Հայաստանի անշարժ գույքի տեղեկատվական համակարգ» համակարգչային ծրագիր մուտքագրման աշխատանքներին:

Իրավունքները՝

- իր լիազորությունների շրջանակներում քաղաքացիներից պահանջելու լրացուցիչ

տեղեկություններ.

- խորհրդատվություն տրամադրելու նպատակով Կոմիտեի ստորաբաժանումներից պահանջել և ստանալ տեղեկատվություն՝ իրենց գործառույթներին առնչվող հարցերի ու խնդիրների վերաբերյալ՝ քաղաքացիներին ճիշտ ուղղորդելու նպատակով:

Պարտականությունները՝

- մատուցվող ծառայություններից օգտվողներին ցուցաբերել մեթոդական աջակցություն.
 - քաղաքացիների որակյալ սպասարկել և պատշաճ ծառայությունների մատուցել դիմումների ընդունման և ավարտական փաստաթղթերի տրամադրման շրջանակներում.
 - անձը հաստատող փաստաթղթերի հիման վրա ստուգել պայմանագիրը ստորագրող անձանց ինքնությունը
 - ստուգել պայմանագրում ու անձը հաստատող փաստաթղթերում այդ անձանց վերաբերյալ տվյալների համապատասխանությունը.
 - պետական գրանցում կատարելու լիազորություն ունեցող պաշտոնատար անձանց կողմից պետական գրանցման վարույթները կասցնելու, դադարեցնելու, մերժելու հիմքերի և դրանց արդյունքում պահանջվող փաստաթղթերի կամ տեղեկատվության վերաբերյալ մեթոդական աջակցություն տրամադրել, ինչպես նաև պարզաբանել դրանց բովանդակությունը.
 - տրամադրել տեխնիկական կամ ոչ տեխնիկական բնույթի սխալների ուղղման կարգի, դրանց ուղղման նպատակով անհրաժեշտ փաստաթղթերի մասին տեղեկատվություն.
 - ստորագրության իսկության ճանաչման համար ներկայացված պայմանագրի ընդունումը մերժելու հիմքերի, ինչպես նաև պայմանագրի կողմերի կողմից ներկայացվող փաստաթղթերի ցանկի վերաբերյալ աջակցություն տրամադրել քաղաքացիներին.
 - կատարել դիմումներին կից ներկայացվող փաստաթղթերի՝ «Հայաստանի անշարժ գույքի տեղեկատվական համակարգ» համակարգչային ծրագիր տեսաներածման կամ տվյալների մուտքագրման միջոցով ավտոմատ ներբեռնման ու գեներացման աշխատանքներ.
 - ճանաչել պայմանագրի կողմերի ստորագրությունների իսկությունը կամ օրենքով սահմանված հիմքերի առկայության դեպքում մերժել այդ գործընթացը
 - նախապատրաստել Կենտրոնի գործառույթների շրջանակներում առաջարկություններ, տեղեկանքներ, զեկուցագրեր և այլ գրություններ:

3. Պաշտոնին ներկայացվող պահանջներ

3.1. Կրթություն, որակավորման աստիճանը

Բարձրագույն կրթություն

3.2. Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ

3.3. Աշխատանքային ստաժ, աշխատանքի բնագավառում փորձառություն

Հանրային ծառայության առնվազն մեկ տարվա ստաժ կամ մեկ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ փաստաթղթավարության կամ հումանիտար բնագավառում գրադարանավարների, արխիվավարների և թանգարանապահների բնագավառում՝ մեկ տարվա աշխատանքային ստաժ:

3.4. Անհրաժեշտ կոմպետենցիաներ

Ընդհանրական կոմպետենցիաներ՝

1. Խնդրի լուծում
2. Հաշվետվությունների մշակում
3. Տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն
4. Բարելավություն

Ընտրանքային կոմպետենցիաներ՝

1. Ծառայությունների մատուցում
2. Բողոքների բավարարում
3. Ժամանակի կառավարում
4. Փաստաթղթերի նախապատրաստում

4. Կազմակերպական շրջանակ

4.1. Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների բնույթով պայմանավորված մասնագիտական գործունեության վերջնարդյունքին նպաստող միջանկյալ արդյունքի ստեղծման համար:

4.2. Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների բնույթով պայմանավորված՝ մասնագիտական գործունեության վերջնարդյունքին նպաստող միջանկյալ արդյունքի ստեղծման շրջանակներում:

4.3. Գործունեության ազդեցությունը

Ունի ազդեցություն մասնագիտական աշխատանքների ապահովման և որոշակի մասնագիտական գործառույթների իրականացման շրջանակներում:

4.4. Շփումները և ներկայացուցչությունը

Իր իրավասության շրջանակներում շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս համապատասխան մարմնի այլ կառուցվածքային ստորաբաժանումների ներկայացուցիչների, այլ մարմինների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ, հանդես է գալիս համապատասխան մարմնի ներսում և համապատասխան մարմնից դուրս ձևավորված մասնագիտական աշխատանքային խմբերում:

4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում է մասնագիտական խնդիրներ և ներկայացնում խնդիրների լուծման տարբերակներ և մասնակցում է կառուցվածքային ստորաբաժանման առջև դրված խնդիրների լուծմանը: